

ԵՆԹԱՂՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գրողի լեզվի ձևաբանական, շարահյուսական իրակությունների ուսումնասիրման կարևորությունն ավելի է ընդգծվում, երբ խոսքը վերաբերում է այնպիսի հեղինակների, որոնց գործունեությունը համընկնում է գրական լեզվի զարգացման վաղ շրջանին, երբ դրա քերականական շատ իրողություններ գրական մշակման, կալմաստման և միօրինականացման ընթացքի մեջ են գտնվում: Նման պարագայում գրողի լեզվի քերականական իրողությունների ուսումնասիրությունը կարևոր նպաստ կրերի մաս գրական լեզվի գիտական պատմության ստեղծման գործին: Եթե համապատասխան շրջանի մեր գրողների, բանաստեղծների լեզվի ձևաբանական իրողությունները հանգամանորեն ուսումնասիրված լինեին, մենք ավելի հավատալի տեղեկություն կունենայինք, ասենք, այնպիսի հարցերի մասին, թե երբվանից են սկսվել մեր գրական լեզվում գործածվել և երբ են ընդհանուր ճանաչում գտել ենթադրական եղանակի ժխտական խոնարհման այժմյան ձևերը, առաջակամության հոգնակին և այլն: Այս հարցերից առաջինի մասին արդի հայերենի րալը մեմագրական ուսումնասիրության մյուս դարձրած ամվանի լեզվաբաններ Հ. Բարսեղյանը և Ա. Արախամյանը քավական ընդհանուր ձևով են արտահայտվում: «Նախասովետական շրջանի հայերենում,- գրում է Հ. Բարսեղյանը,- հանդիպում ենք պայմանական եղանակի քաղմաթիվ ժխտական ձևերի, որոնք ամորոշ դերքայով են կազմված»:¹ «Հետագայում,- գրում է Ա. Արախամյանը,- տեղի է ունենում Լ ձայնորդի անկում: Պետք է ասել, որ այդ երևույթը լայն տարածում ստացավ և դարձավ տիրապետող, քայց այդ անցումում էլ կար. օրինակ՝ Հովհաննես Թումանյանի մոտ գտնում ենք մաս առանց Լ ձայնորդի ձևը՝ «...Նա ձեզ էմքան շատ է սիրում... Նա չի քողմի ձեզ սոված»:² Լ ձայնորդի անկման ժամանակը մատմանշելու նպատակով Ա. Արախամյանի կողմից բերված այս միակ օրինակը՝ վերցված Հ. Թումանյանից, զուրկ է հավաստիությունից, որովհետև քաղված է հեղինակի 1939թ. միհատորյակից, որտեղ այդ ձևը ամենայն հավանականությամբ տեղ է գտել անզգույշ խմբագրման պատճառով: Թումանյանի Երկերի գիտական հրատարակության մեջ անճշտությունը վերացված է՝ «Նա չի քողմիլ ձեզ սոված»:³ Հասկանալի է, որ այս մասնավոր խնդրին ավելի կոնկրետ պատասխան տալու համար հիշատակված լեզվաբաններն ստիպված պիտի լինեին ուսումնասիրել քավական ծավալում գրականություն, որ եթե ոչ անհնար, ապա այնքան էլ արդյունավետ չէր լինի: Բայց ահա այդ հարցին անդրադառնում է Ալ. Մարգարյանը Մ. Նալբանդյանի լեզվի ուսումնասիրության կապակցությամբ: Նա նպատակ է դրել պարզել, թե Մ. Նալբանդյանն ինչպես է նպաստել մեր գրական լեզվի քերականական իրողությունների ծավալմանն ու զարգացմանը և այժմ մեզ հետաքրքրող խնդրի կապակցությամբ, հասկանալի պատճառով, կանգնել է որոշակի դժվարության առջև: Նա ստիպված է լինում իրողությունը մերկայացնել Մ. Նալբանդյանի ստեղծագործության ընձեռած հմարավորությունների սահմաններում: Բայց մեզ գոհացուցիչ չի թվում նրա վկայությունը, ըստ որի իբր Նալբանդյանն իր լեզվի զարգացման երեք շրջաններից առաջինում և վերջինում ժխտական դերքայն օգտագործել է ամորոշ դերքայի ձևով (չի խառնի, չի կառույ), իսկ միջին շրջանի շուրջ երեք տարվա ընթացքում՝ այժմյան, գրական ձևով:⁴ Սա անհավանական է թվում, մանավանդ որ ժխտման դերքայի՝ Նալբանդյանի կողմից գրական ձևով օգտագործման և ոչ մի օրինակ չի բերված:

Ու. Իշխանյանը մշելով, թե Վ. Տերյանի «Մթնշաղի ամուրջներ»-ում սովորականը ենթադրական եղանակի ժխտական ձևերում դերքայն առանց լ-ի գործածությունն է, չի

¹ Հ. Բարսեղյան, Արդի հայերենի րալի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 235:

² Ա. Արախամյան, Հայերենի դերքայները և նրանց ձևաբանական մշակությունը, Եր., 1953, էջ 260: Ընդգծումը մերն է:

³ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ), հ.1, Եր., 1950, էջ 111:

⁴ Ալ. Մարգարյան, Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը, Եր., 1957, էջ 199:

կամենալ ձևը դեպք է համարում: Նա գրում է. «Անուրջներում» ունենք չի կամենալ դեպքը («Չի կամենալ մա վերստին քեզ տանջել»):⁵ Բայց Տերյամի բանաստեղծություններում ենթադրական եղանակի ժխտական ձևերը լ-ով գործածելու այլ փաստեր էլ ենք մկատում: Օրինակ՝ «Չեմ հավանքիլ խավարում»:⁶ «Չեմ լսիլ մոցա ձայները...»:

Ենթադրական եղանակի ժխտական ձևերի գործածության հարցում Թումանյանի վերաբերմունքն ստույգ ձևով ներկայացնելը որոշակի դժվարություն է առաջացնում մահ հետևյալ պատճառով: Վերը մշվեց, քե ինչպես բանաստեղծի միևնույն ժամանակ անհիմն ձևով տեղ է գտած եղել «չի բողմի» (փոխ. չի բողմի) ժխտական ձևը: Բայց դա եզակի դեպք չէ: Ինչպես ուշադիր դիտարկումն է ցույց տալիս, Թումանյանի երկերի տարբեր, մույնիսկ գիտական հրատարակություններում այժմ մեզ հետաքրքրող որոշ խրատություններ տարբեր ձևով են ներկայացված, թույլ են տրվել անճշտություններ, անհարկի միջամտություններ, որոնց մի մասը, ինչպես տոտրև ցույց կարվի, մինչև օրս էլ պատճառ է դառնում, որ ճիշտ չըմկալվի հեղինակի ասելիքը: Նախ մշենք ենթադրական ժխտական ձևերի ոչ ճիշտ ներկայացված մի քանի ձևեր:

Մի՞թե, հայրիկ, իմ մտադրանք,

էլ չեմ քերիլ հուրն անջեզ:⁸

Ընդգծված բայաձևի գործածությունը ճշգրտվել է բավական ուշ, բանաստեղծի երկերի երկրորդ գիտական հրատարակությունում. «էլ չեմ քերիլ հուրն անջեզ»:⁹

-Ո՛հ, չէ, սիրուն, էլ ոչ մի սեր

Դուք էլ, ամուշ սար ու ձորեր,

ճար չի ամիլ իմ սրտիմ,

Չեք դիմանալ էս դարդին...

Այսպես է Թումանյանի 1903թ. Թրիլիսիում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուում:¹⁰ Իսկ 1908թ. Բաքվում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուում ընդգծված ձևերը տեղ են գտել առանց լ վերջնահանդուրձի՝ «ճար չի ամիլ», «չեք դիմանալ»:¹¹ Կարո՞ղ ենք ասել, քե լ-ի կրճատումները Թումանյանի կողմից են կատարված: Դժվար է հարցին դրական պատասխան տալ: Հայտնի է, որ Թումանյանը դժգոհ է եղել Բաքվի ժողովածուի հրատարակությունից, որտեղ անհարկի խմբագրումներ են կատարվել հրատարակչի կողմից, առանց Թումանյանի գիտության: Մի ձեռագիր պատճիկի վրա Թումանյանն այսպիսի դիտողություն ունի. «Մխալմեքով լիքն է Բաքվի հրատարակությունը»:¹² Մեզ միանգամայն հավանական է քվում, որ Բաքվի ժողովածուի մեջ տեղ գտած «ճար չի ամիլ», «չեք դիմանալ» ձևերը հրատարակչության կողմից կատարված «ճշգրտումներ» են: Բանաստեղծի երկերի առաջին գիտական հրատարակության մեջ տեղ են գտել «ճար չի ամիլ», «չեք դիմանալ» ձևերը (հ.1, 1950, 134), իսկ երկրորդ գիտական հրատարակությունում առաջինը գործածված է լ-ով («ճար չի ամիլ»), իսկ երկրորդը՝ առանց լ-ի («չեք դիմանալ»):¹³

Միևնույն ստեղծագործության մեջ մույն բայի ժխտական ենթադրականը երկու ձևով ներկայացված լինելու ուշագրավ փաստեր կ'ունենանք «Ճառող ձուկը» հեքիաթում: Այդ տեղ կորչիլ, հասմիլ քայերի ենթադրականի ժխտականը ներկայացված է և՛ ամորոշ, և՛ ժխտման դերբայներով: «-Ի՛նչ քզուկ, ծնկան ծեքին արքուն ծուղրուղու կանչի, ձենը ակամջը չի հասմիլ»:¹⁴ «-Ի՛նչ փոքրիկ, մապաստակը մի ծայրից մյուսը չի հասմիլ»:¹⁵ «Լավություն արա ու ջուրը գցի՝ չի կորչիլ»:¹⁶ «... ջուրը գցի - չի կորչիլ»:¹⁷

⁵ Ռ. Ի. Չ. խ ա մ յ ա մ, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Եր., էջ 330:

⁶ Վ. Տ. եր յ ա մ, Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ), հ. 1, Եր., 1960, էջ 182:

⁷ Վ. Տ. եր յ ա մ, ԵԺ, հ. 2, Եր., 1973, էջ 169:

⁸ Հ. Թ. ու մ ա մ յ ա մ, ԵԺ, հ.1, 1950, էջ 295:

⁹ Հ. Թ. ու մ ա մ յ ա մ, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 2, 1990, էջ 124:

¹⁰ Հ. Թ. ու մ ա մ յ ա մ, Բանաստեղծություններ, Թիֆլիս, 1903, էջ 34:

¹¹ Հ. Թ. ու մ ա մ յ ա մ, Բանաստեղծություններ, Բաքու, 1908, էջ 50:

¹² Գ.Ա.Թ. Թ.Ա. (Գրականության և արվեստի բանգարան, Թումանյանի արխիվ), ք. 1272:

¹³ Հ. Թ. ու մ ա մ յ ա մ, ԵԼԺ, հ. 1, Եր., 1988, էջ 188:

¹⁴ Նույն տեղում, հ. 5, Եր., 1994, էջ 189:

¹⁵ Նույնը:

¹⁶ Նույն տեղում, էջ 190:

¹⁷ Հ. Թումանյան, ԵԺ, հ. 3, Եր., 1949, էջ 161:

Մինչև այժմ ուշադրության արժանացած եմթադրական եղանակի ժխտականի զուգահեռ ձևերը, ամկախ այն քանից դրանցում ամորոշ դեբրայը վերջադիր լ-ով է մերկայացված եղել, քն առանց դրան, խոսքի ռովանդակության վրա չեն անդրադառնում: Բայց Թումանյանի արձակ ստեղծագործությունների, հատկապես հոդվածների տպագրության ժամանակ տեղ են գտել եմթադրական եղանակի մասն այնպիսի ժխտական ձևեր, որոնք մասնադասության միտքը երկիմաստ, ուղղակի սխալ ձևով են մերկայացնում: Այդպիսի գործածություն ենք մկատում «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածում: Նշելով, քն դեռ 18-րդ դարի սկզբում Իսրայել Օրիմ, հայոց բարձր հոգևորականությունը, մեկիքները բանակցության մեջ են մտել Պֆալցի գերմանական կուրֆյուրստի հետ, խնդրել են աջակցել իրենց երկիրը պարսկական բռնակալությունից ազատելու գործում, Թումանյանն ավելացնում է, քն այն ժամանակ, այսինքն՝ XVIII դարի սկզբում, «գերմանական կուրֆյուրստը, քն ցանկանում էր օգնել հայերին, հայտնեց, քն եվրոպական պետությունները հակամարտ շահեր ունեն Արևելքում՝ Պարսկաստանում ու Տաճկաստանում, չեն միաբանել հայկական հարցի վրա...»:¹⁸ Մի՞թե եվրոպական պետությունները XVIII-ի սկզբին կամ դրանից առաջ հայկական հարցը քնմարկման առարկա են դարձրել և չեն միաբանել: Կարծում ենք՝ ընդգծված ձևը տպագրական վրիպակի հետևանք է, որ տեղ է գտել Թումանյանի Երկերի ինչպես առաջին,¹⁹ այնպես էլ երկրորդ (հ.7,10) հրատարակություններում: Ամենայն հավանականությամբ ընդգծված այդ ձևի փոխարեն Թումանյանի կողմից գործածված է եղել՝ չեն միաբանել, այսինքն՝ գերմանական կուրֆյուրստն Իսրայել Օրում և մրա համախոհներին ասել է, քն եվրոպական պետությունները չեն միաբանել հայկական հարցի վրա (և ոչ քն՝ չեն միաբանվել): Եվ մեջբերման ամմիջական շարունակությունն էլ հօգուտ այսպիսի ըմբռնման է խոսում: Ավելացնենք մասն, որ հայտնի իրողություն է, որ Թումանյանի ժամանակներում եմթադրական եղանակի ժխտական ձևերում ամորոշ «դեբրայի և լուծողը միշտ փոխվում է և ձայնավորի»:²⁰ Այսպիսի բազմաթիվ գործածություններ կան Թումանյանի ստեղծագործություններում: Նշենք մի երկուսը. «...Ղ. Աղայանը, մեր աշխարհի խեղդուկ մթնոլորտից մեղվելով եքն աղաղակում է քն՝ քիչ է մնում փախչեն և՛ գրականությունից, և՛ մեր միջավայրից, չի փախչի ու շատ ուրախ օրեր կոնսանի...»:²¹ «Իսկի մարդն էլ չի եղ քանին հավանի,- համաձայնեց Գործորը»:²²

Առանց մանրամասնելու մշենք, որ վրիպակի հետևանքով և լուծողի փոփոխություն տեղ է գտել Թումանյանի մասն մեկ այլ հոդվածում, հետևյալ մասնադասության մեջ. «Մակայն մոքա չեն խառել ըմբերող հասարակությանը և հայոց մուսայի համար ըմդիանում արհամարհանք են վաստակել»:²³ Ավելի միշտ մոտեցում է ցուցաբերված եղել Թումանյանի Երկերի առաջին գիտական հրատարակությունում, որտեղ ընդգծված քայանձը մերկայացված է «չեն խառել» ձևով:²⁴ Նոքա, այսինքն՝ բանաստեղծի հռչակ ունենալու ցանկությամբ տարված ապաշնորհները, որ «հանգեր քիսելով» ուզում են Ուիմպուս բարձրանալ, չեն խառիլ (= չեն խաքի), չեն կարող խաքել ըմբերողին:

Արտասովոր երևույթ չէ, երբ գրական ճանաչված քերականական ձևը լեզվի զարգացման ըմթացքում իր տեղը զիջում է բարբառային, խոսակցական համարված ձևին կամ հավասար գործածություն ունեցող զուգաձևերից մեկն է հաղթող հանդիսանում՝ նվաճելով գրական նորմայի իրավունք: Արևելահայերենում զարգացման այդպիսի ըմթացք է ունեցել, օրինակ, օժանդակ քայի եզակի թվի III դեմքի ժխտական ձևը: 1906թ. հրատարակված իր «Աշխարհաբարի քերականություն» աշխատության մեջ Մ. Արեղյանը հետևյալն է մշում. «Ներկայ ժամանակների մեջ եմ օժանդակի բացասական երրորդ դեմքը չէ՝ յանախ օղողվողական ձևով դառնում է չի, ինչպես՝ չէ ասում, չէ ասել,

¹⁸ Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Եր., 1995, էջ 10: Ընդգծումը մերն է:

¹⁹ Հ. Թումանյան, ԵԺ, հ. 4, Եր., 1951, էջ 227:

²⁰ Մ. Արեղյան, Աշխարհաբարի քերականություն, Եր., 1906, էջ 131: Ընդգծումը հեղինակինն է:

²¹ Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. 6, Եր., 1994, էջ 287:

²² Նույն տեղում, հ. 5, էջ 12:

²³ Նույն տեղում, հ. 6, էջ 13:

²⁴ Հ. Թումանյան, ԵԺ, հ. 4, էջ 9:

յէ ասեղու դառնում են՝ յի ասում, յի ասել, յի ասելու»:²⁵ Բայց այժմ, իմչախս հայտնի է, վերջին ձևերն են գրական ճանաչվում: Նույնպիսի ընթացք է ունեցել մակ ենթադրականի ժխտական ձևերի զարգացումը: Արևելահայերենի առաջին քերականագետների կողմից գավառական բարբառներին, խոսակցական լեզվին բնորոշ ճանաչված յեմ սի-րի, յեմ եառու և մյուս ձևերը հաղթող հանդիսացան գրական համարված յեմ սիրի, յեմ կառու և մյուս ձևերի հանդեպ: «Գավառական բարբառներում, - գրում է Ս. Պալյասանյանը, - երբեմն 1 տառը քաջ է թողվում յեմ խօսի, յեմ ուշամալ, յեմ ասի, լի գմա - որ ոմանք գրաւորի մէջ է են գործածում»:²⁶ Նույնն է արձանագրում մակ Ս. Արեղյանը. «Անորոշ դերբայի լ վերջաւորութիւնը խօսակցական, երբեմն և գրական լեզուի մէջ յաճախ դուրս է ընկնում: Օրինակ՝ յեմ գրի, յեմ խօսի, յեմ գմա(ւ), յեմ զարմանա(ւ)»:²⁷

Ընդեռ այ մինչև XX դարի 20-30-ական թթ. ենթադրականի ժխտական ձևերը գուցադիր գործածություն են ունեցել, և քականաբար դա պիտի արտացոլված լիներ մակ Թումանյանի ստեղծագործություններում: Պատմական մոտեցում չցուցաբերելու դեպքում միայն կարելի է ժամանակի գրական նորմայից շեղում դիտել ենթադրական եղանակի ժխտական ձևերի լ-ով կազմությունները, որոնք՝ որպես ժամանակի գրական նորմայի դրսևորումներ, քավական քարձր հաճախականություն ունեն Թումանյանի գեղարվեստական և հրապարակախոսական երկերում: Նշենք մի քանի օրինակներ. «Էլ յեմ խաքի մեզ մըանց մեքենամերն ու ճարտար արվեստները» (հ. 7, 148): «Կտպորի, եռ էդպես յի մմալ...» (հ. 5, 41): «Տեղն ընկած տեղը ոչինչ յի խնալի մրա գործին վնասելու» (հ. 6, 223): «Էդ տեսակ կարծիք յի լիմիլ» (հ. 7, 41): Ահա և ենթադրական եղանակի ժխտական ձևերի առանց լ-ի կազմություններ. «Էմպես յեմ անի, որ բոմի» (հ. 5, 63): «Հյուր յե՛՛ ո ռնոունի ձեր տունն էս գիշեր» (հ. 5, 188): «Չենք բոռնի որ չենք բողմի» (հ. 5, 189): «Կախենում է մի կաքարալա» յի դուրս գա միջից» (հ. 6, 8):

Այսպիսով, Թումանյանի ստեղծագործություններում ենթադրական եղանակի գուցադիր ժխտական ձևերի գործածությունը (յեմ կառու, յեմ գրի-յեմ կառու, յեմ գրի) պայմանավորված է ժամանակի արևելահայ գրական լեզվի զարգացման վիճակով և ոչ թե անհատական մոտեցման հետևանք է: Այդ գուցադիր ձևերը ճշգրտորեն արտացոլված չեն հեղինակի երկերի նույնիսկ գիտական հրատարակություններում: Ե խոնարհման քայերի ենթադրական եղանակի ժխտական որոշ ձևեր ոչ ճիշտ մերկայացված լինելու պատճառով (յեմ միաքանի-փոխանակ՝ յեմ միաքանի և այլն) Թումանյանի կողմից արտահայտվող միտքը երկիմաստ, ուղղակի սխալ ձևով է մերկայացվել:

УПОТРЕБЛЕНИЕ ПАРАЛЛЕЛЬНЫХ ОТРИЦАТЕЛЬНЫХ ФОРМ СОСЛОГАТЕЛЬНОГО (ГИПОТЕТИЧЕСКОГО) НАКЛОНЕНИЯ В ПРОИЗВЕДЕНИЯХ ОВ. ТУМАНЯНА

Резюме

С. Мелконян

В произведениях Ов. Туманяна, употребление параллельных отрицательных форм сослагательного наклонения (յեմ կարիսի, յեմ գրի - յեմ կարիս, յեմ գրի) обусловлено состоянием развития восточноармянского литературного языка в тот период, а не является следствием индивидуального подхода. Эти параллельные формы не точно отражены даже в академических изданиях автора. По причине неточной передачи некоторых отрицательных форм сослагательного наклонения глаголов "Ե" спряжения (յեմ միաքանի-վместо յեմ միաքանի) мысль, выраженная Туманяном, представлена двусмысленно, просто неверно.

²⁵ Մ. Արեղյան, *Ողջ. աշխ.*, էջ 133:

²⁶ Մ. Պալյասանյան, *Քերականության մարտնի լեզուի, Թիֆլիս, 1974, էջ 160:*

²⁷ Մ. Արեղյան, *Ողջ. աշխ.*, էջ 132: